ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՅԱԼ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների եւ մասնակիցների, ինչպես նաեւ նրանց հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանության վիթխարի կարեւորությունը,

սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներով նրանց տեղաշարժումը ապահովելու նպատակով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների եւ մասնակիցների, ինչպես նաեւ նրանց հավասարեցված անձանց վրա, որով սահմանված են տրանսպորտի համապատասխան տեսակներով երթեւեկության արտոնություններ՝ համաձայն 1-ին, 2-րդ, 3-րդ հավելվածների:

ՀՈԴՎԱԾ 2

Հայրենական մեծ պատերազմի առաջին եւ երկրորդ խմբի հաշմանդամներին եւ նրանց հավասարեցված անձանց տրամադրվում է սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներով, տարին մեկ անգամ (դեպի եւ հետ) երկաթուղով կամ գետային նավատորմի տարանցիկ եւ տեղական ուղիների նավերով անվճար երթեւեկության իրավունք եւ օդային, ջրային կամ միջքաղաքային ավտոմոբիլային տրանսպորտով՝ 50% զեղչով: Խորհրդային Միության հերոսներին եւ Փառքի երեք աստիճանների շքանշանով պարգեւատրված անձանց տրամադրվում է տրանսպորտի նշված տեսակներով տարին մեկ անգամ (դեպի եւ հետ) անվճար երթեւեկության իրավունք:

Հայրենական մեծ պատերազմի երրորդ խմբի հաշմանդամներին եւ նրանց հավասարեցված անձանց տրամադրվում է օդային, ջրային կամ միջքաղաքային ավտոմոբիլային տրանսպորտով 50% զեղչով տարին մեկ անգամ երթեւեկելու (դեպի եւ հետ) իրավունք:

Պահպանվում են Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին եւ նրանց հավասարեցված անձանց համար օդային, ջրային, երկաթուղային եւ միջքաղաքային ավտոմոբիլային տրանսպորտով երթեւեկության վճարման սեզոնային արտոնությունները (հոկտեմբերի 1-ից մայիսի 15-ը):

Հայրենական մեծ պատերազմի առաջին խմբի հաշմանդամներին եւ նրանց հավասարեցված անձանց ուղեւորության ժամանակ ուղեկցող անձանց տրամադրվում է 50% զեղչ երկաթուղային, ջրային, օդային եւ միջքաղաքային ավտոմոբիլային տրանսպորտով երթեւեկելու ժամանակ:

ՀՈԴՎԱԾ 3

Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին եւ նրանց հավասարեցված անձանց, նախկին ԽՍՀՄ պաշտպանության կամ զինվորական ծառայության այլ պարտականությունների կատարման ժամանակ վիրավորվելու, կոնտուզիայի կամ վնասվածքների հետեւանքով, կամ ճակատում գտնվելու հետ կապված հիվանդության հետեւանքով զոհված զինծառայողների ծնողներին եւ կանանց տրամադրվում է երկաթուղային, ջրային, օդային կամ միջքաղաքային ավտոմոբիլային տրանսպորտով տարեկան մեկ անգամ երթեւեկության (դեպի եւ հետ) արժեքի 50% զեղչի իրավունք:

ՀՈԴՎԱԾ 4

Սույն Համաձայնագրի 2-րդ եւ 3-րդ հոդվածներում նշված անձանց, ըստ իրենց ցանկության, երկաթուղային, ջրային, օդային կամ միջքաղաքային ավտոմոբիլային տրանսպորտով տարին մեկ անգամ իրենց հասանելիք 50% զեղչով երթեւեկության (դեպի եւ հետ) փոխարեն, տրամադրվում է երկու տարին մեկ անգամ տրանսպորտի նշված տեսակներով անվճար երթեւեկության (դեպի եւ հետ) իրավունք:

ՀՈԴՎԱԾ 5

Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին եւ մասնակիցներին, ինչպես նաեւ նրանց հավասարեցված անձանց եւ հավելված 3-ին համապատասխան այլ անձանց, անկախ նրանց բնակության վայրից, տրամադրվում է քաղաքային եւ մերձքաղաքային ուղեւորատար տրանսպորտով անվճար երթեւեկության իրավունք:

ՀՈԴՎԱԾ 6

Տրանսպորտային կազմակերպությունները ապահովում են սույն Համաձայնագրում նշված անձանց սպասարկման արտոնյալ պայմաններով՝ անկախ նրանց բնակության վայրից:

ՀՈԴՎԱԾ 7

Երթեւեկության արտոնյալ տոմսի ձեռքբերման համար հիմք են հանդիսանում նախկին ԽՍՀՄ համապատասխան մարմինների կամ Կողմերի տված երթեւեկության համար արտոնյալ վկայագիրը եւ կտրոնների թերթիկը 1992 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործող ձեւով, արտոնյալ երթեւեկության իրավունք ունեցող անձի մշտական բնակության վայրով:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագրում նշված անձանց երթեւեկության արժեքի վճարման հետ կապված ծախսերի փոխհատուցումը տրանսպորտային կազմակերպությունները իրականացնում են Կողմերի ազգային օրենսդրություններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համաձայնագիրը բաց է սույն Համաձայնագրի նպատակները եւ սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1993 թվականի մարտի 12-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

Հավելված 1
Հայրենական մեծ պատերազմի
հաշմանդամների եւ մասնակիցների,
ինչպես նաեւ նրանց հավասարեցված
անձանց համար արտոնյալ
երթեւեկության իրավունքների
փոխադարձ ճանաչման մասին 1993

թվականի մարտի 12-ի
Համաձայնագրին կից

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՄԻՋՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԵՐԹԵՎԵԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ

1. Առաջին համաշխարհային եւ քաղաքացիական պատերազմների հաշմանդամները:
2. Զինծառայողների թվից հաշմանդամները, ովքեր հաշմանդամ են դարձել նախկին ԽՍՀՄ պաշտպանության կամ զինվորական ծառայության այլ պարտականությունների կատարման ժամանակ վիրավորվելու, կոնտուզիայի կամ վնասվածքների հետեւանքով կամ ճակատում գտնվելու հետ կապված հիվանդության հետեւանքով զոհված զինծառայողների ծնողներին եւ կանանց տրամադրվում է երկաթուղային, ջրային, օդային կամ միջքաղաքային ավտոմոբիլային տրանսպորտով տարեկան մեկ անգամ երթեւեկության (դեպի եւ հետ) արժեքի 50% զեղչի իրավունք,
հաշմանդամներ՝ նախկին ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության եւ պետական անվտանգության կոմիտեի մարմինների ղեկավար եւ շարքային կազմի անձանց թվից, ովքեր հաշմանդամ են դարձել ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ վիրավորվելու, կոնտուզիայի կամ վնասվածքների հետեւանքով,
հաշմանդամներ՝ ոչնչացնող գումարտակների, դասակների եւ ջոկատների մարտիկների ու հրամանատարական կազմի թվից, որոնք 1944 թվականի հունվարի 1-ից մինչեւ 1951 թվականի դեկտեմբերի 31-ը գործել են նախկին Ուկրաինական ԽՍՀ, Բելառուսական ԽՍՀ, Լիտվական ԽՍՀ, Լատվիական ԽՍՀ, Էստոնական ԽՍՀ եւ հաշմանդամ են դարձել այդ գումարտակներում, դասակներում եւ ջոկատներում ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ վիրավորվելու, կոնտուզիայի կամ վնասվածքների հետեւանքով:

Հավելված 2
Հայրենական մեծ պատերազմի
հաշմանդամների եւ մասնակիցների,
ինչպես նաեւ նրանց հավասարեցված
անձանց համար արտոնյալ
երթեւեկության իրավունքների
փոխադարձ ճանաչման մասին 1993
թվականի մարտի 12-ի
Համաձայնագրին կից

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՄԻՋՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԵՐԹԵՎԵԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ

1. Քաղաքացիական պատերազմի եւ նախկին ԽՍՀՄ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները՝ գործող բանակի կազմի մեջ մտնող զորամասերում, շտաբներում եւ հաստատություններում ծառայություն անցած զինծառայողների թվից եւ նախկին պարտիզանները:
2. Կամավոր հավաքագրված Խորհրդային բանակի, Ռազմածովային նավատորմի, նախկին ԽՍՀՄ ներքին գործերի եւ պետական անվտանգության մարմինների թվից անձինք, ովքեր Հայրենական մեծ պատերազմի ժամանակամիջոցում հաստիքային պաշտոններ են զբաղեցրել գործող բանակի կազմի մեջ մտնող զորամասերում, շտաբներում եւ հաստատություններում, կամ անձինք, ովքեր այդ ժամանակաընթացքում գտնվել են քաղաքներում, որոնց պաշտպանության մասնակցությունը համարվել է որպես արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման համար տարիների հաշվառում՝ սահմանված գործող բանակի զորամասերի զինծառայողների համար:
3. Այն զինծառայողների ծնողները եւ կանայք, ովքեր զոհվել են նախկին ԽՍՀՄ

պաշտպանության կամ զինվորական ծառայության այլ պարտականությունների կատարման ժամանակ վիրավորվելու, կոնտուզիայի կամ վնասվածքների հետեւանքով կամ ճակատում գտնվելու հետ կապված հիվանդության հետեւանքով:

4. Նախկին Լենինգրադ քաղաքի ձեռնարկություններում, հաստատություններում եւ կազմակերպություններում 1941 թվականի սեպտեմբերի 8-ից մինչեւ 1944 թվականի հունվարի 27-ը ընկած ժամանակահատվածում աշխատած եւ "Լենինգրադի պաշտպանության համար" շքանշանով, ինչպես նաեւ "Շրջափակված Լենինգրադի բնակչին" նշանով պարգեւատրված անձինք:

5. Աֆղանստանում կամ այլ երկրներում, որտեղ մարտական գործողություններ են վարվել մարտական գործողությունների ժամանակ վիրավորված, կոնտուզիա կամ վնասվածքներ ստացած զինծառայողները, բանվորները եւ ծառայողները:

6. Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակահատվածում ֆաշիստների եւ նրանց դաշնակիցների կողմից ստեղծված համակենտրոնացման ճամբարների, առանձնաթաղերի եւ հարկադիր պահման այլ վայրերի անչափահաս կալանավորները:

7. Դիմադրության հակաֆաշիստական շարժման նախկին մասնակիցները:

8. Հատուկ կազմավորումների նախկին աշխատակիցները, ովքեր Հայրենական մեծ պատերազմի ընթացքում տեղափոխվել են այն անձանց կարգավիճակի, ովքեր գտնվել են Կարմիր բանակի շարքերում եւ իրականացրել են խնդիրներ՝ ի շահ գործող ճակատների կամ գործող նավատորմերի օպերատիվ գոտիների:

Հավելված 3
Հայրենական մեծ պատերազմի
հաշմանդամների եւ մասնակիցների,
ինչպես նաեւ նրանց հավասարեցված
անձանց համար արտոնյալ
երթեւեկության իրավունքների
փոխադարձ ճանաչման մասին 1993
թվականի մարտի 12-ի
Համաձայնագրին կից

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԱՐՎԱՐՁԱՆԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԱՆՎՃԱՐ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ

1. Անձինք, ովքեր անվճար երթեւեկության իրավունք ունեն քաղաքային ուղեւորատար տրանսպորտի բոլոր տեսակներով (բացի տաքսիից) եւ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով (բացի տաքսիից) բնակության վայրի վարչական շրջանի սահմաններում գյուղական վայրերում.

1.1. Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամները եւ նրանց հավասարեցված անձինք,

1.2. Հայրենական մեծ պատերազմի առաջին խմբի հաշմանդամներին եւ նրանց հավասարեցված անձանց ուղեւորության ժամանակ ուղեկցող անձինք,

1.3. Խորհրդային Միության հերոսները եւ Երեք աստիճանի փառքի շքանշանով պարգեւատրված անձինք,

1.4. գործող բանակի կազմի մեջ մտնող զորամասերում, շտաբներում եւ հաստատություններում ծառայություն անցած զինծառայողների թվից քաղաքացիական եւ Հայրենական մեծ պատերազմների, նախկին ԽՍՀՄ պաշտպանությանն ուղղված մարտական գործողությունների մասնակիցները եւ նախկին պարտիզանները,

1.5. կամավոր հավաքագրված Խորհրդային բանակի, Ռազմածովային նավատորմի, նախկին ԽՍՀՄ ներքին գործերի եւ պետական անվտանգության մարմինների թվից անձինք, ովքեր Հայրենական մեծ պատերազմի ժամանակամիջոցում հաստիքային պաշտոններ են զբաղեցրել գործող բանակի կազմի մեջ մտնող զորամասերում, շտաբներում եւ հաստատություններում, կամ անձինք, ովքեր այդ ժամանակաընթացքում գտնվել են քաղաքներում, որոնց պաշտպանության մասնակցությունը համարվել է որպես արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման համար տարիների հաշվառում՝ սահմանված

գործող բանակի զորամասերի զինծառայողների համար,
1.6. Աֆղանստանի Հանրապետությունում, այլ երկրների տարածքներում մարտական գործողություններին մասնակցած նախկին զինծառայող-ինտերնացիոնալիստների թվից անձինք,
1.7. Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում անձնազոհ աշխատանքի եւ անբասիր զինվորական ծառայության համար նախկին ԽՍՀՄ շքանշաններով պարգեւատրված անձինք,
1.8. այն զինծառայողների ծնողները եւ կանայք, ովքեր զոհվել են նախկին ԽՍՀՄ պաշտպանության կամ զինվորական ծառայության այլ պարտականությունների կատարման ժամանակ վիրավորվելու, կոնտուզիայի կամ վնասվածքների հետեւանքով կամ ճակատում գտնվելու հետ կապված հիվանդության հետեւանքով,
1.9. նախկին Լենինգրադ քաղաքի ձեռնարկություններում, հաստատություններում եւ կազմակերպություններում 1941 թվականի սեպտեմբերի 8-ից մինչեւ 1944 թվականի հունվարի 27-ը ընկած ժամանակահատվածում աշխատած եւ "Լենինգրադի պաշտպանության համար" շքանշանով, ինչպես նաեւ "Շրջափակված Լենինգրադի բնակչին" նշանով պարգեւատրված անձինք,
1.10. դիմադրության հակաֆաշիստական շարժման նախկին մասնակիցները,
1.11. հատուկ կազմավորումների նախկին աշխատակիցները, ովքեր Հայրենական մեծ պատերազմի ընթացքում տեղափոխվել են այն անձանց կարգավիճակի, ովքեր գտնվել են Կարմիր բանակի շարքերում եւ իրականացրել խնդիրներ՝ ի շահ գործող ճակատների կամ գործող նավատորմերի օպերատիվ գոտիների:
2. Արվարձանային հաղորդակցության տրանսպորտի բոլոր տեսակներով անվճար երթեւեկության իրավունք ունեցող անձինք (բացի տաքսիից).
2.1. Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամները եւ նրանց հավասարեցված անձինք,
2.2. Հայրենական մեծ պատերազմի առաջին խմբի հաշմանդամներին եւ նրանց հավասարեցված անձանց ուղեկցող անձինք (մեկ ուղեկցողից ոչ ավել),
2.3. Քաղաքացիական պատերազմի եւ նախկին ԽՍՀՄ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները՝ գործող բանակի կազմի մեջ մտնող զորամասերում, շտաբներում եւ հաստատություններում ծառայություն անցած զինծառայողների թվից եւ նախկին պարտիզանները,
2.4. դիմադրության հակաֆաշիստական շարժման նախկին մասնակիցները:
3. Արվարձանային հաղորդակցության ավտոբուսներով անվճար երթեւեկության իրավունք ունեցող անձինք.
3.1. Խորհրդային Միության հերոսները եւ Երեք աստիճանի փառքի շքանշանով պարգեւատրված անձինք,
3.2. Աֆղանստանի Հանրապետությունում, այլ երկրների տարածքներում մարտական գործողություններին մասնակցած նախկին զինծառայող-ինտերնացիոնալիստների թվից անձինք:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի մարտի 12-ից: